


~~Գարշիս Վ.~~

~~Տագանյան Կոնստանտին~~

~~Գորյուն.~~



1936

Վ. ԳԱՐՇԻՆ

1



ԹԱՐԳՄԱՆԵՑ  
ՍՏ. ԶՈՐՅԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ  
ԳՈՐՏԸ

891715  
9-35

1936

-6 NOV 2011

891.715  
9-35



Վ. ԳԱՐՇԻՆ

Ճ Ա Ն Ա Պ Ա Ր Հ Ո Ր Դ  
Գ Ո Ր Տ Ը

ՆԿԱՐՆԵՐԸ  
Գ. ՆԻԿՈՒՍԿԱՅԻ




ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1 9 3 6

Պատ. խմբագիր՝ Ա. Հայրյան  
Տեխ. խմբագիր՝ Ս. Գասպարյան  
Սրբագրիչ՝ Ա. Արզումանյան

Գլավիխի լիազոր Կ. - 1067, հեռ. 3659  
Պասվեր 440, սիրտ 3000  
Պետրասի սպարան, Յեռեվան, II ԳնուՆյանցի, 4



3567 - 84



# ՃԱՆԱՊԱՐՅՈՐԴ ԳՈՐՏԸ

ՀԵՔԻԱՔ

**Կ**ար մի կռկռան գորտ: Ապրում էր նա ճահիճում ու մժեղներ էր փորսում, գարնանն էլ բարձրաձայն կռկռում էր ընկերուհիների հետ միասին: Յե՛վ նա իր ամբողջ կյանքն այդպես էլ լավ կապրեր, յեթե, իհարկե, ձկնկուլը չուտեր նրան. Բայց ահա պատահեց մի դեպք:

Մի անգամ նստել էր նա կոճղի՝ ջրից դուրս յեկած փոքրիկ ճյուղի վրա և հաճույքով վայելում էր տաք, մանրամաղ անձրևը:

«Ա՛խ, ի՛նչ լավ, թաց յեղանակ ե այսօր, — մտածում էր նա: — Ի՛նչ հաճույք ե աշխարհում պարելը»:

Անձրևը թրջում էր նրա պուտ-պուտուրիկ, կարծես լաքած մեջքը. կաթիլները հոսում էյին նրա փորի տակն ու փոտների յետևը և այդ սքանչելի յեր — դուրեկան, այնքան դուրեկան, փոր նա քիչ

մնաց կոկոսար, բայց, բարեբախտաբար հիշեց, վոր աշուն ե արդեն և վոր աշնանը գորտերը չեն կրուկրում — դրա համար կա գարուն: Այդ պատճառով նա լոեց ու սկսեց վայելել անձրևի հաճույքը:

Հանկարծ ողի մեջ հնչեց բարակ, սուլող ու ընդհատ մի ձայն: Կա բազերի մի տեսակ. յերբ թռչում են, նրանց թևերը, ողբ ճեղքելիս, կարծես յերգում են կամ, ավելի լավ ե ասել, շվշվացնում են. Փյո՛ւ-Փյո՛ւ-Փյո՛ւ-Փյո՛ւ — լսվում ե ողի մեջ, յերբ այդ տեսակ բազերի յերամը թռչում ե յերկրնքով և իրենք մինչև իսկ չեն յերևում, անքան նրանք բարձր են թռչում: Այս անգամ բազերը, մի մեծ կիսաշրջան գծելով, ցած իջան հենց այն ճահճի վրա, ուր մեր գորտն եր ապրում:

— Դն, դն, — ասավ բազերից մեկը: — Դեռ հեռու պիտի թռչենք, հարկավոր ե մի բան ուտել:

Այդ լսելով՝ գորտն իսկույն թագնվեց: Նա թեպետ գիտեր, վոր բազերը չեն ուտի իրեն՝ խոշոր ու հասալիկ կոկոսին, բայց և այնպես, համենայն դեպս, սուզվեց կոճղի տակ:

Սակայն, մտածելով, նա սիրտ արավ և չոված աչքերով գլուխը հանեց շրից. նա շատ հետաքրքրվում եր իմանալ, թե ուր են թռչելու բազերը:

— Դն, դն, — ասավ մի ուրիշ բադ: — Յեղանակըն արդեն ցրտում ե: Գնանք շուտով դեպի հարավ, գնանք հարավ:

Յեվ բոլոր բազերը բարձրաձայն ղողուցրին ի նշան հավանության:

— Հարգելի բազեր, — սիրտ արավ ասել գորտը, — Խնչ բան ե այդ հարավը, ուր դուք գնում եք: Խնդրում եմ ներեք անհանգստացնելուս համար:

Յեվ բազերը շրջապատեցին նրան: Սկզբում նրանք ցանկու թյուն ունեցան ուտել գորտին, բայց



Կար մի կոկոսան գո՛ւս

մնաց կոկոսար, բայց, բարեբախտաբար հիշեց, վոր աշուն ե արդեն և վոր աշնանը գորտերը չեն կրուկրում — դրա համար կա գարուն: Այդ պատճառով նա լոեց ու սկսեց վայելել անձրևի հաճույքը:

Հանկարծ ողի մեջ հնչեց բարակ, սուլող ու ընդհատ մի ձայն: Կա բազերի մի տեսակ. յերբ թռչում են, նրանց թևերը, ողը ճեղքելիս, կարծես յերգում են կամ, ավելի լավ ե ասել, շվշվացնում են. Փյու-փյու-փյու-փյու — լսվում ե ողի մեջ, յերբ այդ տեսակ բազերի յերամը թռչում ե յերկրնքով և իրենք մինչև իսկ չեն յերևում, այնքան նրանք բարձր են թռչում: Այս անգամ բազերը, մի մեծ կիսաշրջան գծելով, ցած իջան հենց այն ճահճի վրա, ուր մեր գորտն եր ապրում:

— Դ՛ա, դ՛ա, — ասավ բազերից մեկը: — Դեռ հեռու պիտի թռչենք, հարկավոր ե մի բան ուտել:

Այդ լսելով՝ գորտն իսկույն թագնվեց: Նա թեպետ գիտեր, վոր բազերը չեն ուտի իրեն՝ խոշոր ու հասալիկ կոկոսին, բայց և այնպես, համենայն դեպս, սուզվեց կոճղի տակ:

Սակայն, մտածելով, նա սիրտ արավ և չուված աչքերով գլուխը հանեց ջրից. նա շատ հետաքրքրվում եր իմանալ, թե ուր են թռչելու բազերը:

— Դ՛ա, դ՛ա, — ասավ մի ուրիշ բազ: — Յեղանակըն արդեն ցրտում ե: Քնանք շուտով դեպի հարավ, գնանք հարավ:

Յեվ բոլոր բազերը բարձրաձայն ղողոացրին ի նշան համայնության:

— Հարգելի բազեր, — սիրտ արավ ասել գորտը, — Ի՞նչ բան ե այդ հարավը, ուր դուք գնում եք: Խնդրում եմ ներեք անհանգստացնելուս համար:

Յեվ բազերը շրջապատեցին նրան: Սկզբում նրանք ցանկու թյուն ունեցան ուտել գորտին, բայց



Կար մի կոկոսան գուս

Նրանցից յուրաքանչյուրը մտածեց, վոր գորտը շատ խոշոր ե և իրենց կոկորդը չի մտնի: Այդ ժամանակ նրանք սկսեցին զոզուալ, թևերնին թափահարելով:

— Հարավը լավ ե: Այնտեղ հիմա տաք ե: Այնտեղ այնպիսի փառավոր, տաք ճահիճներ կան: Ի՞նչ ճիճուներ կան: Լավ ե հարավում:

Նրանք այնպես զոզուացին, վոր գորտին խլացրին համարյա: Գորտը հազիվ կարողացավ համոզել նրանց, վոր լռեն և խնդրեց նրանցից մեկին, վորը նրան թվում եր ավելի հաստ ու բուրբից խելոք, բացատրել իրեն, թե ինչ բան ե հարավը: Յե՛վ յերբ բազը պատմեց նրան հարավի մասին, գորտը հիացավ, բայց վերջում այնուամենայնիվ հարցրեց, վորովհետև գգուշ եր.

— Իսկ այնտեղ մ ժեղներ, մոծակներ շատ կան:

— Ո՛ր, ինչքան ասես, անթիվ-անհամար, — պատասխանեց բազը:

— Կր՛ո, — ասավ գորտը և անմիջապես յետ դարձավ նայելու, թե մոտերքն ընկերուհիներ չկան, վոր կարող եյին լսել իրեն և դատապարտել՝ աշնանը կուռացնելու համար: Նա ել չկարողացավ իրեն զսպել, վոր գեթ մի անգամ գոնե չկոռա: — Ինձ ել տարեք ձեզ հետ:


— Այդ զարմանալի յե, — բացականչեց բազը:

— Մենք ինչպես կարող ենք քեզ տանել: Դու թևեր չունես:

— Դուք յե՛րբ եք թռչելու, — հարցրեց գորտը:

— Շուտով, շուտով, — կանչեցին բազերը միասին: — Այ, դա: Այստեղ ցուրտ ե: Գնանք դեպի հարավ, հարավ:

— Թույլ տվեք միայն մի հինգ ըոպե մտածել, —





Ի՞նչպես կարող ենք քեզ տանել: Դու թե՛վեր չունես

ասավ գորտը,—յես անմիջապէս կվերադառնամ և հավանորեն մի վորկէ լավ բան կխորհեմ:

Յե՛վ նա նորից շրպպաց ջուրն այն ճյուղից, վորին բարձրացել եր կրկին. սուզվեց տղմի մեջ և բոլորովին ծածկվեց նրանով, վոր կողմնակի բաներ չխանգարեն իրեն խորհելու: Անցավ հինգ րոպէ, բազերը պատրաստվում եյին արդեն թռչել, յերբ հանկարծ ջրից, կոճղի ճյուղի մոտից, այն ճյուղի, վորին քիչ առաջ նստել եր գորտը, յերևաց նրա գունչը, և այդ դնչի արտահայտությունը շատ փայլուն եր, վորքան միայն ընդունակ ե գրան գորտը:

— Յես մտածեցի, գտն, — ասավ նա: — Թող ձեզնից յերկուսը կտուցներով մի ճիպոտ բռնեն, իսկ յես կկախվեմ նրա մեջտեղից: Դուք կթռչեք, իսկ յես կմեկնեմ: Հարկավոր ե միայն, վոր դուք չղրուաք, իսկ յես չկոռամ, և ամեն բան հիանալի կլինի:

Լուրը և թեկուզ մի թեթև գորտի յերեք հազար վերստ տանելը չգիտես ինչ հաճույք եր, բայց գորտի խելքը բազերին այնպես հիացրեց, վոր նրանք բոլորը միասին համաձայնեցին տանել նրան: Վորոշեցին յուրաքանչուր յերկու ժամը մեկ տանողներին փոխել, և փորովհետև բազերի թիվը շատ-շատ եր, իսկ գորտը մենակ եր—այնքան ել շուտ-շուտ չեյին տանելու: Գտան մի լավ, ամուր փոքրիկ ճիպոտ, յերկու բազ բռնեցին կտուցներով ծայրերից, իսկ գորտը բերանով մեջտեղից ու ամբողջ յերամբ բարձրացավ ողր: Գորտի սիրտն ան ընկավ այն սարսափելի բարձրությունից, ուր բազերը տարան նրան. բացի գրանից բազերը թռչում եյին անհամասար, յերբերումներով ու թափ եյին տալիս ճիպոտը. խեղճ



Գորտի սիրտն ան ընկավ այդ սարսափելի բարձրությունից

ճանապարհ ընկան, բայց այս անգամ ճանապարհորդուհի գորտը, վորպեսզի լավ տեսնի, թե ինչ է կատարվում ճանապարհին, ճիպտից կախվեց՝ մեջքն ու գլուխն առաջ, իսկ վորը յետ արած: Բազերը թռչում էին հնձած դաշտերի, դեղնած անտառների վերևից, և գյուղերի վերևից, վոր լիքն էին ցորենի դեզերով. այնտեղից լսվում էին մարդկային ձայներ և թակիչների շաշյուն, հաճար էին ծեծում: Մարդիկ նայում էին բազերի յերամին և, նրա մեջ տարրինակ բան նկատելով, ձեռքով ցույց էին տալիս: Յեվ գորտը սաստիկ ցանկանում էր թռչել յերկրին մոտիկ, ցույց տալ իրեն ու լսել, թե մարդիկ ինչ են խոսում իր մասին: Հետևյալ հանգստակայանում նա ասաց.

— Չի կարելի, վոր այդքան բարձր չթռչենք: Բարձրութունից գլուխս պտտվում է և վախենում եմ վայր ընկնեմ, յեթե հանկարծ ինձ վատ զգամ:

Յեվ բարեսիրտ բազերը խոստացան նրան ցած թռչել: Հետևյալ որը նրանք այնքան ցած էին թռչում, վոր լսում էին, թե ինչ էին խոսում մարդիկ:

— Տեսեք, տեսեք, — կանչեցին յերեսխաները մի գյուղում, — բազերը գորտ են տանում:

Գորտը լսեց այդ և նրա սիրտը հրճվեց:

— Տեսեք, տեսեք, — կանչեցին մյուս գյուղում հասակավորները, — այ քեզ հրաշք:

«Տեսնես գիտե՞ս, վոր այս բանը յես եմ մտածել, և վոչ թե բազերը», մտածեց կռուանը:

— Տեսեք, տեսեք, — կանչեցին յերրորդ գյուղում, — ինչ հրաշք է: Տեսնես ո՞վ է մտածել ես խորամանկ բանը:



— Այդ յե՛ս եմ մտածել, յե՛ս

Այստեղ գորտն այլևս չհամբերեց և մոռանալով ամեն զգուշութիւն, ուժովը մեկ գոռաց.

— Այդ յես եմ մտածել, յես, յես:

Ու այդ ձայնի հետ միասին գլխիվայր ընկավ ցած՝ գետնին:

Իագերը բարձր ճչացին. նրանցից մեկն ուզեց հենց թռիչքի ժամանակ բռնել խեղճ գորտին, բայց վրիպեց: Գորտը բոլոր չորս վոտն ել թափահարելով, արագորեն ընկնում եր գետին, բայց վորովհետև բազերը շատ արագ եյին թռչում, այդ պատճառով ել ուղիղ չընկավ այն տեղը, վորից վերև ճչաց և ուր պինդ ճանապարհ եր, այլ ընկավ շատ ավելի հեռու, ինչ վոր նրա համար մեծ բարեբախտութիւն եր, վորովհետև նա չլպպաց գյուղի ծայրին գտնվող կեղտոտ լճակի մեջ:

Նա անմիջապես գլուխը դուրս հանեց ջրից և իսկույն տենդագին կանչեց կոկորդովը մեկ:

— Այդ յես եմ մտածել, յես:

Բայց նրա շուրջը վոչ-վոք չկար: Անսպասելի ճողփյունից վախեցած՝ տեղական գորտերը թագնւր-վեցին ջրում:

Իսկ յերբ գլուխները դուրս հանեցին, զարմացած նայեցին նորեկին:

Յեվ նա պատմեց նրանց մի հրաշալի պատմութիւն, թե ինչպես ինքը ամբողջ կյանքը մտածում եր և, վերջապես, հնարեց մի նոր, անսովոր միջոց՝ բազերով ճամբորդելու. թե ինչպես ինքն ուներ իր սեփական բազերը, վոր տանում եյին իրեն, ուր ցանկանում եր. թե ինչպես ինքը յեղել ե սքանչելի հարավում, ուր այնպես, այնպես լավ ե, ուր այնպիսի գեղեցիկ, տաք ճահիճներ կան և այնքան առատ մժեղներ և ուրիշ ամեն տեսակ ուտելու միջատներ:

— Յես յեկա ձեզ մոտ տեսնելու, թե ինչպես եք ապրում, — ասավ նա: — Յես ձեզ մոտ կմնամ մինչև գարուն, մինչև վոր կվերադառնան բազերս, վորոնց քիչ առաջ արձակեցի:

Իայց բազերն այլևս չվերադարձան: Նրանք կարծում եյին, թե իրենց կուռանը ջարդ ու փշուր ե յեղել գետնին դիպչելով, և շատ ափսոսում եյին նրան:



*[Faint, illegible text visible through the paper, likely bleed-through from the reverse side.]*

*[Faint, illegible text or markings.]*

«Ազգային գրադարան»



NL0390469

ФЛС 50 члч.

В. ГАРШИМ  
ЛЯГУШКА ПУТЕШЕСТВЕННИЦА  
ГИЗ. ССРЛ БРЕВАН 1936

2941